

Վ. Ա. ԱԶԱՐՅԱՆ

ԶԵՐՄՈՒԿ ԱՌՈՂՋԱՐԱՆԻ ԾԱՌԵՐՆ ՈՒ ԹՓԵՐԸ

Զերմուկը Սովետական Միության ամենակարևոր ու հեռանկարային առողջարանների թվին է պատկանում: Նախատեսված է այն վերածել կուրորտային խոշոր կենտրոնի:

Վերջին մի քանի տասնամյակներում Զերմուկը լրիվ կերպարանափոխվել է: Շինարարական և բարեկարգման աշխատանքների հետ զոգընթաց կանաչապատվել է քաղաքը և անտառապատվել են նրա շրջակա տարածությունները:

Մեր կողմից 1960—62 թթ. կատարված ուսումնասիրությունների նպատակն է եղել ամփոփել Զերմուկի կանաչապատման և անտառապատման փորձը, մշակել հեռանկարային ասորտիմենտը ելնելով ինչպես տեղի, այնպես էլ Սևանի ավազանի կանաչապատման արդյունքներից:

Զերմուկը գտնվում է Հայկական ՍՍՌ-ի արևելյան մասում, ծովի մակերեսից 2000—2070 մետր բարձրության վրա, Արփա գետի վերին հոսանքներում: Ամառը այնտեղ բարեխառն է և զով, իսկ ձմեռը մեղմ է համեմատած Հայկական ՍՍՌ մյուս բարձր լեռնային: բնակավայրերին, ինչպիսիք են Սևանը, Ղուկասյանը, Բաղարչայը և այլն:

Զերմուկում սովորաբար կայուն ցածր ջերմաստիճանները սկսվում են Հոկտեմբերի երկրորդ կեսերից: Առաջին ձյունը տեղում է նոյեմբերի վերջերին: Կայուն ձյունածածկոցը պահպանվում է 5—5,5 ամիս և ունենում է 60—80 սմ հաստություն: Այն վերանում է ապրիլի վերջերին—մայիսի սկզբներին:

Ինչպես ցուց են տալիս 1 աղյուսակի տվյալները, տեղումների տարեկան միջին քանակությունը կազմում է 720 մմ, որի գգալի մասը տեղում է գարնան վերջին և ամռան սկզբներին: Այդ ժամանակամիջոցում երրիմն լինում են կարկտահարություններ: Գարնան վերջին ցրտահարությունները սովորաբար նշվում են ապրիլի 28-ից մինչև մայիսի 3—5, իսկ աշնան առաջին ցրտահարությունը՝ հոկտեմբերի 13—22:

Զերմուկում ամառը բավականին զով է, սակավ տեղումներով: Քամիները գերազանցապես հարավային են և բավականին չոր ու բացասաբար են ազդում բուսականության վրա: Աշնանը վշում են արևելյան և հարավ-արևելյան քամիներ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մթնոլորտային տեղումների քանակը խիստ նվազում է:

Զերմուկի և նրա շրջապատի հողերը բավականին բազմազան են՝ հետանտառային, տափաստանացված, դարչնագույն և այլն: Քաղաքի տերիորիայում հողերը աշքի են ընկնում միջին և ծանր մեխանիկական կազմով, կավավագային են, թույլ քարքարոտ, հատիկակնծիկային կամ փոշիացած ստրուկտուրայով: Հզորությունը հասնում է 40—80 սմ-ի: Ռեակցիան հիմնային է (pH 6,7—7,2):

Զերմուկի շրջակայթի բուսականությունը հիմնականում քսերոֆիտ է, գերակշռությամբ քսերոֆիտ տարախոտերի և լեռնային տափաստանային բուսա-

կան ծածկոցով: Շրջապատի անտառներում գերիշխող տեսակը (79,3 տոկոս) մացառային ծագում ունեցող, ցածրաբուն արևելյան կաղնին է, որը հաղվագյուտ դեպքերում է առաջացնում խիտ անտառային ծածկոց: Ուղեկցողներ են տանձենում մի քանի տեսակները, դաշտային և սրատերև թղկիները, սովորական հացենին, սովորական արուսենին և այլն: Ենթաանտառում գերազանցապես հանդիպում են գերիմաստին, բռնչենին, լայնատերև իլենին, կովկասյան ցախակեռասը, մասրենիները և այլն:

Զերմուկի շրջակայքում լավ են պահպանվել գիհիների նոսր անտառները, որոնք հիմնականում կազմված են յուպերոս polycarpus, J. oblonga, J. depressa, J. sabina տեսակներից: Կաղնուտներում և գիհիների նոսր անտառներում բնական վերած համարյա թե չի նկատվում:

Աղյուսակ 1
Զերմուկի կլիմայական միջին ցուցանիշները բատ ամիսների

Ամիսները	Օղի զերմաստիճանը			Ցեղական մեջ բատ ամիսների	Օղի հարաբերականությունների	Օղի բացարձականությունների
	ամսվա միջինը	բացարձակ մաքսիմում	բացարձակ միջնամում			
Հունվար	-7,2	8,4	-28,2	60	70	2,6
Փետրվար	-6,5	9,4	-25,5	63	70	2,8
Մարտ	-3,4	13,7	-19,9	81	71	3,5
Ապրիլ	3,1	18,6	-19,8	83	60	5,1
Մայիս	8,8	22,7	-7,8	86	66	7,4
Հունիս	12,5	28,3	-0,4	65	66	9,4
Հուլիս	15,7	31,5	-1,0	41	64	11,1
Օգոստոս	15,7	31,0	0,9	28	59	10,0
Սեպտեմբեր	11,8	28,1	4,7	21	62	8,4
Հոկտեմբեր	6,2	23,5	-12,5	55	63	5,8
Նոյեմբեր	0,1	15,3	-17,8	60	66	4,3
Դեկտեմբեր	-6,2	11,6	-24,7	62	70	3,7
Տարեկան մեջինը	4,3	31,5	-28,2	720	67	6,1

Զերմուկի բնապատմական պայմանները համեմատած ուստուրիկայի այլ բարձրադիր վայրերի հետ (օրինակ Սևանի), ավելի բարենպաստ են ծառաթփային բուսականության համար: Մթնոլորտային տեղումների քանակը Զերմուկում ավելի բարձր է, քան Սևանում, իսկ ձմեռը ավելի մեղմ է, ձյունածածկոցը ավելի կայուն է և հզոր: Համեմատարար բարձր և կայուն է նաև օդի հարաբերական խոնավությունը: Թերեւս նման բարենպաստ պայմաններով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ Զերմուկում և նրա շրջակայքում Սևանի համեմատությամբ ավելի լավ է պահպանվել անտառային բուսականությունը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Զերմուկում ներմուծված ծառերի և թփերի մեծամասնությունը աճում են, ծաղկում և պտղաբերում շատ ավելի հաջող, քան Սևանի բուսաբանական այգում: Վերջին հանգամանքը հիմք է տալիս կարծելու, որ Զերմուկը իրենից ներկայացնում է մի յուրահատուկ ինտրոդուկցիայի համար ավելի նպաստավոր գենորոլոգիական շրջան, քան ուստուրիկայի ուրիշ բարձրադիր շրջանները:

Զերմուկի անտառապատման և կանաչապատման աշխատանքները ծավալելու նպատակով 1940 թվին Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր անտառային գլխավոր վարչությունը կազմակերպել է Զերմուկի անտառապա-

տությունը, որն անտառաշխնարարական աշխատանքները հիմնականում ըսկըսել է 1947 թվից:

Այժմ անտառանտեսությունը զբաղեցնում է 3865 հեկտար տարածություն, որից 400 հեկտարը անտառային կուլտուրաներն են, այդ թվում 80—100 շրովի:

Սկզբնական շրջանում անտառապատման աշխատանքները ընթացել են բավականին դանդաղ, անտառ-կուլտուրաների ցածր կազողականության հետևանքով: Դրա հիմնական պատճառը հանդիսացել է ոչ ճիշտ ագրոտեխնիկայի կիրառումը, տեղում սեփական տնկանյութի բացակայությունը, ասորտիմենտի ոչ ճիշտ ընտրությունը և այլն: Մինչև 1950 թ. անտառային կուլտուրաներ հիմնադրվել են միայն 20 հեկտարի վրա, այն էլ հետագայում լրիվ շարքից դուրս է եկել: 1950 թվին իրացվել է 9, իսկ հաջորդ տարին 12,5 հեկտար, որտեղ կազողականությունը եղել է նույնպես անբավարար, մանավանդ անշրջտի և վատ հողերում: Կուլտուրաներում եղել են սոճի, հացենի, թեղի, արռոխ, դեղին ակացիա, սպիտակ հացենի, ձյունապտուղ և այլն: Տնկանյութը սկզբնական շրջանում բերվել է Ստեփանավանի և Կոտայքի անտառանտեսություններից և մասսամբ էլ հոկտեմբերյանից: Անտառային կուլտուրաների ցածր կազողականության հիմնական պատճառը եղել է դրաից բերված տնկանյութի ցածր որակը: Ներկայում Զերմուկի անտառանտեսությունը ունի իր սեփական տնկարանը, որը հիմնականում բավարարում է տնկանյութի պահանջը:

Զերմուկի կանաչապատման և անտառապատման աշխատանքներում ակտիվ մասնակցել են անտառանտեսության շատ մասնագետներ, որոնցից առանձնապես սկետք է նշել ուսուուրիկայի վաստակավոր անտառաբույժ Կ. Ս. Դրիպալյանի:

Զերմուկում աճող ծառաթփատեսակների կազմի մասին ընդհանուր պատեկեր է տալիս 2 աղյուսակը: Տեսակային կազմով հարուստ են կենտրոնական պարկի տնկարկները, մյուս կանաչ տարածությունները համարյա թե շունչն էկրկնվող տեսակներ:

Աղյուսակ 2

Զերմուկում աճող ծառերի և թվերի տեսակային կազմը

Վ ա ր ե	Հնատանիքների թիվը	Ցեղերի թիվը	Տեսակների ու այլամե- սակների թիվը
Կենտրոնական պարկ	18	47	83
Անտառանտեսության կուլտուրաներ	10	23	33
Անտառանտեսության տնկարան	10	19	27
Սանտառքիաների բակերը	7	15	19

Կենտրոնական պարկի համար առանձնացված 12,5 հեկտար տարածությունը եղել է ամբողջապես ճահճակալած, որի շորացման համար կատարել են մելիորատիվ աշխատանքներ: Պարկի տակ եղած հողամասը կարելի է դասել լինուային բերովի սևահողերի տիպին, ունի 60—80 սմ հզորություն: Հողամասի շորացմանը զուգընթաց, 1947 թվին կատարվել է անսիստեմ տնկումներ: Կանաչապատման ու ծաղկազարդման հիմնական աշխատանքները տարվել են 1953—1955 թթ.: Պարկի կառուցման վրա առանձնապես մեծ ուշադրու-

թյուն է դարձվել վերջին 3—4 տարում, երբ յուրացվել է ընդհանուր տարածության 60—70 տոկոսը: Մինչ այդ նշանակած տերիտորիան կանաչապատվել է խառը, անտառացման սիստեմով, հետագայում այն վերակառուցվել է, վերածվելով զբոսայգու, գեղեցիկ ծառուղիներով, ծաղկաթմբերով, ոռոգման ցանցով և այլն:

Պարկում տարվող խնամքն ու ագրոտեխնիկան կայանում է հետեւյալում: Վեգետացիայի ընթացքում մի անգամ փորվում է տնկարկների տակ եղած տարածությունը. այն հողամասերում, որտեղ գազոն է, ծառերի ու թիւերի շուրջը բաժակներ են պատրաստվում ու փիրեցվում: Տնկարկները ջրվում են միջին հաշվով շաբաթը մեկ կամ երկու անգամ: Որոշ հողամասեր ջրելու կարիք չի գեցցվում: Հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ ընդհանրապես պայքար չի տարվում:

Պետք է նշել, որ Զերմուկում ծառերն ու թիւերը հիմնականում տուժում են ալրացող, ճանդ և այլ սնկային հիվանդություններից (կաղնի, կծոխուր, վարդ): Խերմես լվիճով խիստ վարակվում է արևելյան եղևնին:

Պարկում աճող ավելի քան 83 տեսակներից 48 ծառեր են, 35—թիւեր, որոնց աճման ու զարգացման, ձմեռադիմացկանության և ընդհանուր վիճակի վերաբերյալ տվյալները բերվում են 3 աղյուսակում: Զմեռադիմացկանությունը գնահատվել է բալերով հետեւյալ կերպ՝

բոլորովին շեն տուժում նույնիսկ ամենախիստ ձմռանը—«1»

ցրտահարվում են միամյա ճյուղերը 50 տոկոսով—«2»

սիստեմատիկ ցրտահարվում են միամյա ճյուղերը 100 տոկոսով—«3»
ցրտահարվում են բազմամյա ճյուղերը, իսկ բունը պահպանվում է խիստ ձմեռներին—«4»

ձմեռում են ձյան ծածկոցի տակ «5»

ցրտահարվում են մինչև արմատավղիկը «6»

խիստ ձմեռներին ցրտահարվում են ամբողջապես «7»

ինչպես երկում է 3 աղյուսակում բերված տվյալներից, Զերմուկի կենտրոնական պարկում աճող ծառերի ու թիւերի տեսակային կազմի մեծամասնությունը համապատասխան խնամքի ու ջրման գեպքում, նորմալ աճում և զարգանում են, տալով բավարար աճ, միաժամանակ ծաղկում և պտղաբերում են: Օրինակ՝ թղկենիների աճը հասնում է 36—70 սմ, առատորեն պտղաբերում են, հացենիներինը՝ 30—53 սմ ու պտղաբերում են, բարդենիներինը՝ 80 սմ, սոճներինը՝ 45—53 սմ, թեղիներինը՝ 35—60 սմ և այլն:

Շառատեսակների գերակառող մասը Զերմուկի պարմաններում հաջող ձմեռում են, բացառություն են կազմում միայն *Cydonia oblonga*, *Elaeagnus angustifolia* *Aesculus hippocastanum*, *Amorpha fruticosa*, *Ligustrum vulgare* v. *chlorocarpum*, *Rubus idaeus*, *Spiraea bumalda*, *S. Japonica* v. *macrophylla* և այլն: 5—20 տարեկան ծառերի ու թիւերի ընդհանուր վիճակը, բացի 12 տեսակից, գնահատվում է «շատ լավ» կամ «լավ»:

Այս բոլորի հիման վրա գալիս ենք այն եղրակացության, որ Զերմուկ առողջարանում աճող 83 տեսակ ծառերի ու թիւերի մեծամասնությունը հեռանկարային են Զերմուկի ու նրա շրջակայթի կանաչ շինարարության և անտառապատման համար:

Առողջարանի սանատորիաների բակերում ալժմ աճում են 19 տեսակ, ալիք թվում ծառեր՝ 13 և թիւեր՝ 6: Դրանք հետեւյալներն են՝ *Acer negundo*,

Զերմուկ կուրորտի պարկում աճող ծառերի ու թփերի բնութագրություն (առ 1-IX 1962 թ.)

Աղյուսակ 3

Տեսակ, այլատեսակ	Տարբերակ առաջնային	Տարբերակ առաջնային	Աճը (սմ)	Հանձնարկում օդուղութեալ								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Ծառեր												
Abies nordmanniana Spach.	1961	8	1,55	24	19	1,0	—	1	լավ	++	++	++
Acer ginnala Maxim.	1954	12	4,0	36	33	6,0	պտղաբ.	1	լավ	++	++	++
" negundo L.	12	4,8	42	40	6,5	»	1	միջակ	շատ լավ	++	++	++
" pseudoplatanus L.	12	5,0	70	40	8,0	»	1	»	»	»	»	»
" f. purpureum Loud.	1953	13	6,2	60	41	6,0	»	1	»	»	»	»
" tataricum L.	1955	10	4,0	40	40	3,5	»	1	»	»	»	»
" trautvetteri Medw.	1947	18	3,7	45	20	4,0	»	1	»	»	»	»
Aesculus hippocastanum L.	1958	7	0,7	5	10	1,0	—	3	վատ	—	—	—
Betula litwinovi A. Doluch.	1954	12	5,0	35	40	7,0	պտղաբ.	1	շատ լավ	++	++	++
Carpinus caucasica A. Grossh.	1953	13	2,5	22	19	3,0	—	1	լավ	++	++	++
Cerasus avium (L.) Moench.	1954	12	5,5	30	46	4,0	պտղաբ.	1	շատ լավ	++	++	++
Cerasus vulgaris Mill.	1955	10	2,8	10	28	3	պտղաբ.	2	լավ	++	++	++
Cydonia oblonga Mill.	10	0,8	80	8	80	—	5	վատ	—	—	—	—
Elaeagnus angustifolia L.	10	1,0	35	10	0,8	—	4	»	»	—	—	—
Fraxinus excelsior L.	1947	20	6,2	30	31	10	պտղաբ.	1	լավ	++	++	++
" pennsylvanica March.	18	4,5	53	25	6,0	»	1	շատ լավ	++	++	++	++
Juniperus polycarpos.	18	2,7	20	15	4,5	»	1	»	»	—	—	—
" virginiana L.	1953	14	1,6	15	11	4,0	—	1	լավ	—	—	—
Larix japonica	1961	5	1,1	4	22	0,5	—	1	լավ	—	—	—
Malus communis	1952	14	4,2	50	30	5	պտղաբ.	1	շատ լավ	++	++	++
Padus racemosa (Lam.) Gilib.	1953	12	3,0	35	25	300	պտղաբ.	1	շատ լավ	++	++	++
Picea orientalis (L.) Link.	1950	15	2,7	33	18	4,0	—	1	միջակ	—	—	—
Picea pungens Engelm.	1961	7	1,3	18	18	1,0	—	1	լավ	—	—	—
Pinus hamata D. Sosn'	1949	16	3,7	53	23	5,0	պտղաբ.	1	լավ	—	—	—

<i>I</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>	<i>6</i>	<i>7</i>	<i>8</i>	<i>9</i>	<i>10</i>	<i>11</i>	<i>12</i>
<i>P</i> <i>nus</i> <i>pallasiana</i> Lamb.	1947	18	5	45	28	7,0		1	2ամ լաղ	+	+
<i>Populus</i> <i>boleana</i> Lauche	,	18	11,0	25	61	19		1	2ամ լաղ	+	-
· <i>candicans</i> Ait.		18	9	60	50	18		1	2	+	-
· <i>canescens</i> Sm.	1951	14	7,5	40	53	16		1	2	+	-
· <i>cerroides</i> Marsh.	1947	18	10,0	60	33	17		1	2	+	+
· <i>gracilis</i> A. Grossh.	1953	10	7,0	50	70	10		1	2	+	+
· <i>moscoviensis</i> Schroeder	1960	6	3,5	45	58	2,5		1	2	+	-
· <i>pyramidalis</i> Rozier		18	7,5	70	42	12		1	2	+	-
· <i>simonii</i> Carr.	1952	11	10,0	80	91	16	պտղար.	1	2	+	-
· <i>schischkinii</i> A. Grossh.	1947	18	9,6	20	53	13		1	2	+	-
<i>Prunus</i> <i>divaricata</i> Ldb.	1955	10	3,3	60	33	150		1	2	+	+
<i>Pyrus</i> <i>communis</i> L.	1953	10	4,5	22	45	8,0		1	2	+	+
· <i>syriaca</i> Boiss.	1947	18	5,0	20	28	8,0		1	2	+	+
<i>Quercus</i> <i>macranthera</i> Fisch. et Mey.	մեծահաս.	6,0	30	—	12			1	2	+	+
<i>Robinia</i> <i>pseudoacacia</i> L.	1958	7	3,3	77	47	3,0		2	2	+	+
<i>Salix</i> <i>acutifolia</i> Willd.	1955	10	6,0	45	60	5,0		1	2	+	-
· <i>alba</i> L.		10	5,0	50	50	5,0		1	2	+	-
· <i>alba</i> v. <i>vittellina</i> Stokes.		10	7,2	60	72	6,0		1	2	+	-
· <i>alba</i> v. <i>vittellina pendula</i> Reich.		10	6,6	70	66	8,0		1	2	+	-
<i>Sorbus</i> <i>aucuparia</i> L.	1953	10	4,5	35	45	6,0		1	2	+	-
<i>Tilia</i> <i>cordata</i> Mill.		13	4,1	30	32	5,0		1	2	+	-
<i>Ulmus</i> <i>elliptica</i> C. Koch.		13	4,5	35	35	4,0	պտղար.	1	2	+	+
· <i>laevis</i> Pall.		13	4,0	45	30	4,0		1	2	+	+
· <i>pumila</i> L.		13	7,0	60	54	8		1	2	+	-
<i>Փ փ կ բ</i>											
<i>Amorpha</i> <i>fruticosa</i> L.	1954	12	2,0	30	17	120	պտղար.	3	2	+	-
<i>Berberis</i> <i>vulgaris</i> L.		12	2,5	70	20	150		1	2	+	-
· <i>vulgaris</i> v. <i>atropurpurea</i> Reg.		12	1,8	60	15	130		2	2	+	-
<i>Caragana</i> <i>arborescens</i> Lam.		12	2,7	25	22	150		1	2	+	-
<i>Chaenomeles</i> <i>japonica</i> (Thunb.) Lindl.	1954	10	1,3	40	13	30		1	2	+	-
<i>Cornus</i> <i>alba</i> L.		12	3,2	13	27	200		1	2	+	-
· <i>alba</i> v. <i>argenteo-marginata</i> Rehd.		12	2,3	23	19	150		2	2	+	-
· <i>australis</i> C. A. Mey.	1950	10	1,3	30	13	150	ծաղ.	2	2	+	-
<i>Crataegus</i> <i>macracantha</i> Lodd.		12	2,8	36	23	100	պտղար.	1	2	+	-
<i>Erythronium</i> <i>euphratica</i> L.	1953	12	3,0	12	25	100		1	2	+	-

<i>I</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>	<i>6</i>	<i>7</i>	<i>8</i>	<i>9</i>	<i>10</i>	<i>11</i>	<i>12</i>
<i>Forsythia intermedia</i> Zab.	1955	7	1,3	40	18	90	ծաղ.	2	միջակ	+	-
<i>Ligustrum vulgare</i> L.	1954	12	1,2	40	10	85	պաղ.	3	»	+	-
<i>vulgare v. chlorocarpum</i> Loud.	.	12	1,2	50	10	60	»	4	»	-	-
<i>Lonicera tatarica</i> L.	1953	12	2,6	30	21	150	»	1	շատ լավ	+	+
<i>Parthenocissus quinquefolia</i> (L.) Planch.	.	12	3,5	200	28	30	»	2	լավ	+	-
<i>Philadelphus coronarius</i> L.	1955	10	2,0	50	20	150	ծաղ.	2	»	+	-
<i>Physocarpus opulifolius</i> (L.) Maxim.	.	10	2,7	50	27	200	պաղ.	2	»	+	-
<i>Ribes nigrum</i> L.	.	8	1,6	28	20	140	»	1	շատ լավ	+	+
<i>Ribes rubrum</i> L.	1954	9	1,7	20	9	100	»	1	»	-	-
<i>Rosa corymbifera</i> Borkh.	1953	12	2,2	70	18	100	»	1	»	+	-
<i>Rubus idaeus</i> L.	1955	10	1,6	160	16	80	»	6	լավ	+	-
<i>Salix aegyptiaca</i> L.	.	10	2,5	15	25	150	»	3	միջակ	+	-
<i>Sambucus nigra</i> L.	.	10	2,5	70	25	150	»	2	լավ	+	-
<i>Sorbaria sorbifolia</i> (L.) A. Br.	.	10	1,5	50	15	100	»	1	լավ	+	-
<i>Spiraea bumalda</i> Burv.	1954	12	0,65	15	5	80	ծաղ.	4	լավ	+	-
<i>chamaedryiolla</i> L.	.	12	1,8	45	15	100	»	1	շատ լավ	+	-
<i>japonica</i> L.	.	12	1,2	50	10	150	պաղ.	2	»	+	-
<i>japonica v. macrophylla</i> Zbl.	.	12	1,2	130	10	130	ծաղկ.	6	միջակ	+	-
<i>pyramidalis</i> Greene.	.	12	2,0	80	16	130	պաղ.	2	լավ	+	-
<i>vanhouttei</i> (Briot.) Zab.	.	12	1,8	60	15	80	ծաղկ.	2	շատ լավ	+	-
<i>Symporicarpus albus</i> Blake	1955	10	1,8	15	18	200	պաղ.	2	»	+	-
<i>Syringa persica</i> L.	1958	8	2,0	35	40	100	»	1	»	+	-
<i>vulgaris</i> L.	1955	10	2,5	20	25	90	»	1	»	+	-
<i>Thuja occidentalis</i> L.	1961	6	1,75	6	29	1,5	»	1	լավ	+	-
<i>Viburnum opulus</i> L.	1955	10	2,5	40	25	150	»	1	շատ լավ	+	+

A. pseudoplatanus, *Betula litwinovii*, *Fraxinus excelsior*, *F. pennsylvanica*, *Padus racemosa*, *Pinus hamata*, *P. pallasiana*, *Populus simonii*, *Prunus divaricata*, *Pyrus caucasica*, *Salix alba v. vitellina*, *Sorbus aucuparia*, *Caragana arborescens*, *Ligustrum vulgare*, *Rosa corymbifera*, *Spiraea japonica*, *S. pyramidata*, *Thuja occidentalis*.

Սանատորիաների բակերի ու նրանց շրջակայքի կանաչապատումն ու ծառազարդումը գեռևս գտնվում է անբավարար վիճակում:

Սանատորիաների բակերի կանաչապատման համար օգտագործվել են հիմնականում գեկորատիվ տեսակետից ցածրարժեք տեսակներ, ինչպես՝ *Acer negundo*, *Prunus divaricata*, *Malus communis*, *Fraxinus excelsior*, *Rosa corymbifera* և այլն:

Անտառալին կուլտուրաներում մշակվում է բակվականին լայն ասորտիմենտ՝ 33 տեսակ, այդ թվում ծառեր՝ 25 տեսակ: Դրանցից մի քանիսը բացակայում են կենտրոնական գրոսարդում (*Acer platanoides*, *Padus mahaleb*, *Picea excelsa*, *Pyrus salicifolia*, *Sorbus hajastana*, *Ulmus foliacea*, *Samucus sieboldiana*):

Հսու իրենց զարգացման և աճի ցուցանիշների այս տեսակները ևս հեռանկարային են Ձերմուկի համար:

Անտառալին կուլտուրաների վերաբերյալ 4 աղյուսակում բերված տվյալները, որոնք բնորոշում են որոշ տեսակների վարքագիծը շրովի և անջրտի պայմաններում, թույլ են տալիս եզրակացնելու, որ արհեստական ոռոգումը դպալիրեն բարձրացնում է բույսերի աճը և նպաստում նրանց արմատակալմանը տվյալ վայրում: Միաժամանակ բացահայտվում է, որ մի շարք ավելի շորադիմացկուն տեսակներ կարելի է հաջողությամբ աճեցնել անջրտի պայմաններում՝ *Acer platanoides*, *Pinus hamata*, *P. pallasiana*, *Quercus macranthera*, *Padus racemosa*, *Lonicera tatarica*, *Sorbus hajastana* և այլն: Արժանի է նշելու այն հանգամանքը, որ Ձերմուկի անտառներությանը հաջողվել է մշակել օդի և հողի խոնավության նվազմամբ պահանջկոտ մի շարք ամեղնատերեր բույսեր (Abies nordmanniana, *Picea excelsa*), որոնք ուսպութիւնայի ելլ բարձրագիր չոր և ցուրտ կոնտինենտալ կիմա ունեցող վայրերում, օրինակ՝ Սևանում, գժվար են հարմարվում:

Անտառնեսության տնկարանում մշակվում են 27 տեսակ, որոնցից 19 ծառեր են, իսկ 8-ը՝ թփեր: Այս տեսակների բնութագրման տվյալները, որոնք բերված են 5 աղյուսակում ցուց են տալիս, որ համապատասխան աղյուսեխնիկայի կիրառման դեպքում, առանձնապես շրովի պայմաններում միանգամայն հնարավոր է Ձերմուկում աճեցնել որակյալ տնկանյութի: Գնահատելի է այն հանգամանքը, որ անտառնեսությունը մշակության մեջ է մտցրել և մասսայական բազմացնում է տեղական ծագում ունեցող մի շարք բույսեր, որոնք աշքի են ընկնում իրենց դիմացկանությամբ, տնտեսական և գեկորատիվ բարձր արժանիքներով: Օրինակ՝ հայաստանյան արռունին (*Sorbus hajastana*) և սիրիական տանձենին (*Rhus syriaca*) առավելապես դիմացկուն են ցրտի և երաշտի հանդեպ, պահանջկոտ չեն հողի նկատմամբ, բարձր դեկորատիվություն ունեն և կարող են օգտագործվել պտղաբուծության մեջ, հատկապես որպես պատվաստակալ:

Ձերմուկի դենդրոլոգիական ասորտիմենտի ուսումնասիրության նախնական արդյունքները ցուց են տալիս, որ հնարավոր է կանաչապատման և ան-

Զերմուկի անտառային կուլտուրաներում աճող մի քանի ծառերի ու թփերի բնութագրումը ջրովի և անջրտի պայմաններում (առ 1-IX 1962)

Տեսակ, այլատեսակ	Ձ Բ Ռ Վ Կ Ւ						Ա Ն Ջ Ր Մ Ւ						
	առարկքը	բարձրությունը	առարկեցած աճը	սարդարիչ կամ բնի աճը	սարդարագործությունը	հարազարդությունը	առարկեցած աճը	բարձրությունը	առարկեցած աճը	սարդարագործությունը	հարազարդությունը	առարկեցած աճը	
Ծ Ա Ա Կ Բ													
<i>Abies nordmanniana</i>	7	60	20	0,5	1	լավ	6	40	10	0,3	շատ վատ	1	շատ վատ
<i>Acer platanoides</i>	8	255	30	2,5	1	շատ լավ	11	230	17	1,5	միջակ	1	լավ
<i>Aesculus hippocastanum</i>	8	155	40	2,5	2	լավ	11	130	15	2,0	>	3	միջակ
<i>Fraxinus excelsior</i>	7	270	35	2,0	1	>	6	60	8	0,7	վատ	2	վատ
<i>Padus racemosa</i>	14	250	30	2,5	1	շատ լավ	10	200	15	2,0	միջակ	1	միջակ
<i>Pinus hamata</i>	10	300	45	3,1	1	շատ լավ	7	120	25	1,5	միջակ	1	միջակ
<i>pallissiana</i>	9	150	25	2,0	1	լավ	7	80	15	1,0	>	1	>
<i>Quercus macranthera</i>	10	160	25	1,5	1	>	4	30	10	0,7	վատ	1	>
<i>Sorbus hajastana</i>	8	130	25	1,5	1	շատ լավ	4	60	12	1,0	միջակ	1	լավ
<i>Ulmus laevis</i>	7	200	40	2,0	2	լավ	4	60	20	1,5	վատ	3	վատ
Թ Փ Լ Բ													
<i>Caragana arborescens</i>	7	250	38	150	1	շատ լավ	5	130	23	50	վատ	1	վատ
<i>Lonicera tatarica</i>	13	250	30	200	1	>	5	70	18	80	միջակ	1	միջակ
<i>Symporicarpus albus</i>	8	130	80	90	2	լավ	5	40	40	50	վատ	3	վատ

տաղապատման ասպարեզում կիրառել շուրջ 74 տեսակ, որոնցից 26-ը անտառային կովտուրաններում:

Աղյուսակ № 2-ում նշված են մեր կողմից հեռանկարային ճանաչված տեսակները:

Բացի դրանից հաշվի առնելով Սևանի բուսաբանական այգու բազմամյա փորձը ծառերի ինտրոդուկցիայի գծով, խորհուրդ է տրվում փորձարկել նաև հետևյալ 33 տեսակները, որոնք աչքի են ընկնում իրենց դիմացկանությամբ:

Աղյուսակ 5
Զերմուկի անտառանտեսության տնկարանում աճող ծառերի ու թփերի
աստրաֆենտի բնութագրումը

Տեսակ, այլատեսակ	Ծարիքը	Բարձրությունը միլիմետրում	Տարեկան աճը	Սարսաթիւ կուտակությունը միլիմետրում	Գյուղադիմությունը մասնակիությունը միլիմետրում	Հագնածությունը միլիմետրում
Ծ ա ռ ե ր բ						
Acer negundo	8	270	33	2,0	2	լավ
* pseudoplatanus	1	10	10	0,2	1	շատ լավ
f. purpureum						
Cerasus avium	3	100	50	0,8	1	»
Fraxinus excelsior	3	95	33	1,5	1	լավ
Padus mahaleb	2	120	85	50	2	լավ
* racemosa	1	8,0	8,0	0,2		լավ
Pinus hamata	4	80	30	1,0	1	»
* pallasiana	3	30	23	0,7	1	»
Populus canescens	3	120	53	1,5	1	»
* deltoides	3	200	85	1,5	1	»
* gracilis	3	170	60	1,3	1	»
* simonii	3	270	80—130	1,5	1	»
Pyrus salicifolia	8	210	28	1,5	1	»
* syriaca	5	195	52	1,3	1	»
Salix alba v. vitellina	2	167	110	1,5	1	»
Sorbus aucuparia	5	250	60	1,5	1	»
* hajastana	8	215	52	1,5	1	»
Ulmus foliacea	3	150	75	1,5	1	»
* laevis	3	95	40	1,2	2	լավ
Թ փ ե ր						
Caragana arborescens	2	35	30	0,3	1	շատ լավ
Cornus alba	2	30	25	25	1	»
Crataegus macracantha	1	20	20	0,3		
Ligustrum vulgare	2	30	23	10	2	միջակ
Physocarpus opulifolius	3	120	40	80	2	շատ լավ
Ribes nigrum	2	36	15	20	1	»
Sambucus sieboldiana	8	200	40	100	3	լավ
Spiraea pyramidalis	3	130	52	80	1	շատ լավ

տնտեսական կամ դեկորատիվ բարձր արժեքով՝ Juniperus communis, J. foetidissima, Pinus banksiana, P. nigra, P. silvestris, Acer campestre, A. saccharinum, Betula japonica, B. manchurica, B. papyrifera, B. verrucosa, Hippophaë rhamnoides, Malus prunifolia, Quercus robur, Sorbus intermedia, Amelanchier spicata, Clematis orientalis, Cotinus coggygria, Cotoneaster lucida, Deutzia lemoinei, Jasminum fruticans, Lonicera caprifolium, L. morrowii, L. caucasica, Lycium chinensis, Cerasus tomentosa, Rham-

Rhus imeretina, *Rhus aromatica*, *Rosa rugosa*, *Syringa josikaea*, *S. villosa*, *Viburnum lantana*, *Vinca minor*.

Ե. Զ. Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն Ն Ե Ր

1. Ջերմուկ առողջարանի համեմատաբար բարենպաստ հողակլիմայական պայմանները թույլ են տալիս կանաչապատման նպատակով օգտագործել աշխարհագրական, սիստեմատիկական և բիոլոգիական տեսակետից բավականին բազմազան ժառանգային կազմ, որը ընդգրկում է 90 տեսակ:

2. Տեսակների գերազանցող մասը հյուսիսային կիսագնդի բարեխառն և ցուրտ կլիմայի երկրների ծագում ունի, ցուցաբերում է լրիվ դիմացկանություն ջերմուկի պայմաններում, չի տուժում ցրտից և երաշտից, հաջող աճում է և պտղաբերում:

3. Արհեստական ոռոգումը զգալիորեն բարձրացնում է բոլոր ժառատեսակների աճը ջերմուկի պայմաններում և հանդիսանում է նրանց դեկորատիվության դրսերման անհրաժեշտ նախապայմանը:

4. Ծնորչիվ իր համեմատաբար մեզմ կլիմայի ջերմուկը ավելի նպաստավոր է անտառային բուսականության աճի համար, քան ուստուրիկայի կենտրոնական մասի բարձրադիր լեռնային շրջանները (օրինակ Սևանը) և որպես այդպիսին պետք է համարվի ուրույն դենդրոլոգիական շրջան:

5. Ջերմուկի կանաչապատման և անտառապատման նպաստավոր ծառաթփականը հնարավոր է լայնացնել բազմաթիվ սաղարթավոր և փշատերև տեսակներով, որոնք ստուգված են Սևանի պայմաններում:

Վ. А. АЗАРЯН

Деревья и кустарники курорта Джермук

Р е з յ ո ւ մ է

В течение 1960—1962 гг. обследован дендрологический ассортимент высокогорного курорта Джермук. В статье приводится характеристика природных условий курорта и описывается состояние его озеленения. Подробно охарактеризовано поведение всех видов, произрастающих в центральном парке курорта, лесных питомниках и культурах. Выявлено всего 90 видов, в большинстве своем более успешно растущих и плодоносящих в местных условиях по сравнению с другими высокогорными пунктами Армении (Севанский бассейн). Последнее обстоятельство позволяет выделить Джермук в особый дендрологический район. Табличный материал содержит данные о возрасте, росте, плодоношении, зимостойкости и общем состоянии растений каждого вида.

Большинство имеющихся пород вполне пригодно для озеленения Джермуга; рекомендовано для испытания еще 33 вида на основании успешной интродукции их в Севане.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մագակյան Ա. Կ. Растительность Армянской ССР, Ереван, 1941.

Մահատաձե Լ. Բ., Չубարյան Տ. Ղ., Ազարյան Վ. Ա. «Бюллетень Ботанического сада АН АрмССР», 19, 1963.

Դ. Լ. Միքայելյան. Զերմուկ առողջարանը, Երևան, 1959.

Տախտաջյան Ա. Լ. Труды Ботанического института Арм.ФАН, т. 2, 1941.

Հայկական ՍՍՌ Մինիստրների առվետին առընթեր անտառային գլխավոր վարչության հաշվետվությունները (1952—1961 թթ.):